**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԴՈՒՇԱՆԲԵՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՌԱԶՄԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան 28 հոկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գ. Բաղալյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի հոկտեմբերի 6-ին Դուշանբեում ստորագրված՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների միջեւ ռազմատնտեսական համագործակցության բնագավառում գովազդային-ցուցահանդեսային գործունեության ոլորտում փոխգործակցության մասին համաձայնագրում ամրագրված

պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը՝ մուտքագրված 2008 թվականի սեպտեմբերի 22-ին:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2007 թվականի հոկտեմբերի 6-ին Դուշանբեում՝ նպատակ ունենալով ապահովել Կողմերի պաշտպանունակության եւ ազգային անվտանգության անհրաժեշտ մակարդակ, ինչպես նաեւ ամրապնդել արդյունաբերության պաշտպանական ճյուղերի ձեռնարկությունների ձեւավորված եւ ձեւավորվող արտադրական եւ գիտատեխնիկական կոոպերացիայի պայմաններում փոխշահավետ ռազմատնտեսական համագործակցությունը:

2. Համաձայնագիրը բաղկացած է նախաբանից, 9 հոդվածներից եւ վերջաբանից: Համաձայնագրում տրված են դրա իրագործման գծով Կողմերի լիազորված մարմինները եւ համաձայնագրի գործողության ոլորտը:

3. Համաձայնագրով սահմանվում է Կողմերի փոխգործակցությունը հետեւյալ ուղղություններով.

- ռազմատնտեսական համագործակցության մասնակիցների, Կողմերի ձեռնարկությունների ու կազմակերպությունների միջեւ ռազմատնտեսական համագործակցության բնագավառում գովազդային-ցուցահանդեսային գործունեության ոլորտում փոխգործակցության ընդլայնում,

- ՀԱՊԿ անդամ պետությունների ցուցահանդեսներում իրենց ձեռնարկությունների ու կազմակերպությունների միասնական ազգային էքսպոզիցիաների ձեւավորում, ազգային սրահների ստեղծում,

- ՀԱՊԿ անդամ պետությունների ձեռնարկությունների ու կազմակերպությունների համար առավել բարենպաստ ռեժիմի ստեղծում, ներառյալ՝ ցուցահանդեսային տարածքների եւ այլ ծառայությունների տրամադրումը,

- ՀԱՊԿ շրջանակներում ռազմատնտեսական համագործակցության բնագավառում միասնական գովազդային-ցուցահանդեսային դաշտի ձեւավորում, այդ ոլորտում տեղեկատվության եւ աշխատանքային փորձի փոխանակում, գովազդային-

ցուցահանդեսային գործունեություն իրականացնող կազմակերպությունների փոխ-գործակցության իրականացում,

- պետական գաղտնիք կազմող եւ ռազմական նշանակության արտադրանքի վերաբերյալ սահմանափակ տարածման տեղեկատվության պահպանման միջոցառումների ապահովում՝ այն միջազգային պայմանագրերի շրջանակներում, որոնց մասնակից են հանդիսանում Կողմերը:

4. Համաձայնագրով նաեւ կարգավորվում են Կողմերի միջեւ զովազդային-ցուցահանդեսային գործունեության գծով կազմկոմիտեների եւ աշխատանքային խմբերի հիմնադրման հետ կապված հարցերը:

5. Համաձայնագիրը սահմանում է Կողմերի միջեւ ծագած վեճերի լուծման կարգը: Համաձայնագրում նաեւ նախատեսված են դրույթներ՝ դրանում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու, ինչպես նաեւ համաձայնագրի ուժի մեջ մտնելու եւ դադարելու վերաբերյալ:

6. Համաձայնագիրը կատարված է մեկ բնօրինակով՝ռուսերեն:

7. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները ՀՀ Սահմանադրության 9 հոդվածին համահունչ ապահովում են Պայմանավորվող կողմերի միջեւ արտաքին հարաբերությունների իրականացումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2007 թվականի հոկտեմբերի 6-ին Դուշանբեում ստորագրված՝Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների միջեւ ռազմատնտեսական համագործակցության բնագավառում զովազդային-ցուցահանդեսային գործունեության ոլորտում փոխգործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

28 հոկտեմբերի 2008 թվականի
ՍԴՈ- 768